


«Հաստատում եմ»

Երևանի շախմատի ֆեդերացիայի
փոխնախագահ՝ **Ն. Քալանթարյան**

13.12.2019թ.



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Երևանի 2020թ.-ի շախմատի պատանեկան առաջնության
կիսաեզրափակիչ մրցաշար**

Ժամկետները՝ 25.01-03.02.2020թ., խաղերի սկիզբը՝ 16:00-ին:

Ժամակարգը՝ 75-ական թույլ մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած 1-ին քայլից:

Անցկացման վայրը՝ Տ.Պետրոսյանի անվան շախմատի տուն /հասցե՝ ք. Երևան Խանջյան 50/:

Մրցաշարն անցկացվելու է մինչև 10 և 12 տարեկան պատանիների խմբերով:

Մինչև 10 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն 2009թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնված 3-րդ մարզական կարգ ունեցող շախմատիստները:

1-ից 30-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Երևանի 2020թ. մինչև 10 տարեկան պատանիների առաջնության եզրափակիչ մրցաշարին:

Մինչև 12 տարեկան պատանիների մրցաշար

Մասնակցելու իրավունք ունեն 2007թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնված 2-րդ մարզական կարգ ունեցող շախմատիստները:

1-ից 25-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Երևանի 2020թ. մինչև 12 տարեկան պատանիների առաջնության եզրափակիչ մրցաշարին: